



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՒ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲՎԱՎԱԾ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՃԵՆՔԻՆ ՄԵԶ
ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Ս.Ը.Ը.Ի ԾՐՁ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ**

Երեքաբթի, 30 Յունուարի Երեկոյեան, նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Աղք. Մարտիրիսեան Ազգային Առաջնորդարանի նոր շենքին մէջ ընդունեց այցելութիւնը Հ.Ս.Ը.Ը.Ի Ծրչանային Վարչութեան: Յանդիպումին ներկայ եղաւ Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան:

Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին ծանօթացաւ Ծրչ. Վարչութեան նոր անդամներուն, որուք ընտրուած էին Ծրչանային Վերջին ժողովին: Սրբազան Յայրը շնորհաւորեց կազմը եւ համոզում յայտնեց, որ նորընտիր Վարչութիւնը հաւատարմօրէն պիտի շարունակէ նախորդ Վարչութիւններուն ու Հ.Ս.Ը.Ը.Ի Երախտաւորներուն մարզական, դաստիարակչական ու սերնդակերտ գործը: Ան գոհունակութիւն արտայայտեց որ այս հանդիպումը տեղի կ'ունենայ Ազգ. Առաջնորդարանի նոր շենքի բարեփոխման ու պատշաճեցման աշխատանքներու լրումն անմիջապես ետք, այս պահուն, երբ Ազգ. Առաջնորդարանի գրասենեակներուն փոխադրութեան աշխատանքները ընթացքի մէջ են:

Հ.Ս.Ը.Ը.Ի ներկայացուցիչները շնորհաւորանքի արտայայտութիւններով բարի երթ մաղթեցին Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ գործող բոլոր նուիրեալներուն: Անոնք այս առիթով նաեւ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցին յառաջիկայ ծրագիրներուն ուրուագիծը, շնորհակալութիւն յայտնելով, որ Առաջնորդ Սրբազան ու մեր Թեմի հոգեւորականները հոգածու մօտեցումով նեցուկ կը կանգնին Հ.Ս.Ը.Ը.Ի աշխատանքներուն ու կը մասնակցին յատկապես հոգեւոր դաստիարակութեան յայտագիրներուն: Նորընտիր Վարչութեան անդամները վստահութիւն յայտնեցին, որ այս քաջալերանքն ու գործակցութիւնը պիտի շարունակուին նաեւ յառաջիկային:

**PRELATE MET WITH THE REGIONAL EXECUTIVE OF HOMENETMEN AT
THE NEW PRELACY BUILDING**

On the evening of Tuesday, January 30, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, met with the Regional Executive of Homenetmen at the new Prelacy building. Also in attendance was Executive Council Chair Dr. Garo Agopian.

During the meeting, the Prelate was officially introduced to and congratulated the new members who were elected during the previous meeting of the Regional Executive.

Those present agreed that the new Executive would faithfully continue the endeavors of the previous council. The Prelate also expressed gratitude that the meeting was taking place at the new Prelacy building immediately following the completion of renovation and during the relocation process.

The Homenetmen representatives in turn presented an outline of their future projects, and expressed thanks to the Prelate and Prelacy clergy members for their continuous support and encouragement of the organization and participation in spiritual education programs. The meeting came to a close with the members conveying their best wishes to the Prelate and to all those serving under the Prelacy.